2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 ՎԱՃԱՌՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 ՎԱՃԱՌՈՂԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է _____ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:¹⁹ Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Պայմանագրի գնից՝ մինչև _____ ՀՀ դրամը, Գնորդը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Վաճառողին վճարումներ չեն կատարվում:²⁰

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:²¹

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 730 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:²²

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

¹⁹ Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

²⁰ Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:

²¹ Գանձապետարանում հաշիվներ չունեցող պարավորությունների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»

²² Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց: Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխիքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,15 (զրո ամբողջ տասիինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 2 (երկու) տոկոսի չափով:²³ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև. ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:²⁴

²³ Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

²⁴ Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում սույն ենթակետի կիրառման դեպքում գործակալ չի կարող հանդիսանալ ՀՀ կառավարության 20.06.2025թ. թիվ 817-Ա որոշմա ն 2-թվ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ցուցակում ներառված կազմակերպությունը:²⁵

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:²⁶

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի

²⁵ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

²⁶ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համադրել գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Վաճառողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի գիշում՝ պահանջի գիշման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում գնորդը վճարումներն իրականացնելիս ապահովի վաճառողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջի գիշված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի գիշման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում գնորդը պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է գնորդի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը²⁷:

8.13 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ապրանքի մատակարարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից **10** աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:²⁸

²⁷ Եթե գնորդը հանդիսանում է գանձապետարանում հաշիվ չունեցող պարտավորյալ, ապա սույն կետը խմբագրվում է՝ «վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու» բառերը փոխարինելով «բանկին վճարման հանձնարարական փայտ» բառերով:

²⁸ Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 4-րդ նախադասությունը, իսկ 5-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումներ» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա: Սույն կետի 5-րդ նախադասության մեջ սահմանվող ժամկետը չի կարող պակաս լինել 10 աշխատանքային օրից:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

/ստորագրություն/
Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
1	42414700/515	վերելակների (տեղադրումով և սպասարկումով) ձեռքբերում		Ներկայացված է ստորև	հատ			2	ք.Երևան Բյուզանդի հ. 1/3 շենք	2	Պայմանագիրը/ համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 150 օրացուցային օր

Վերելակ վերին մեքենայական սրահով

Տիպը՝ մարդատար

Դռների բացվածքը պարտադիր պետք է լինի 800 մմ, նախատեսված սահմանափակ շարժունակությամբ անձանց համար

ա) ըստ չափագրման կարող է լինել 800 մմ-ից ավելին

բ) **Դռների բացվածքի 800 մմ ապահովելու անհնարինության դեպքում պատվիրատուի հետ համատեղ իրականացնել չափագրում**

Դռների բարձրությունը՝ 2000 մմ

Գլխավոր էլեկտրոշարժիչը՝ առանց փոխանցման տուփի (gearless), VVVF համակարգ

Արագությունը՝ 1մ/վ

Հարկային դռները՝ առնվազն AISI 304 չժանգոտվող պողպատից

Կանչի ապարատ՝ մետաղական, կոճակները հակավանդակ, լույսով

Հարկային ցուցիչ (բոլոր հարկերում) լուսային

Էլեկտրոնային կառավարման վահանակը

Պարտադիր պետք է ունենա տեղեկատվության փոխանցման հանգույց, որը կունենա տվյալների փոխանցման մոդուլ տեղադրելու հնարավորություն

Վերելակի խցիկը

Պատերը և դռները – առնվազն AISI 304 չժանգոտվող պողպատից, խցիկը և հարկային դռները միևնույն գույնով (գույնը/երանգը նախապես համաձայնեցնելով պատվիրատուի հետ)

հրամանի վահանակը - չժանգոտող մետաղից, կանչի կոճակների հասանելիությունը հատակից (900-1200մմ) նախատեսված սահմանափակ կարողությամբ անձանց համար

կոճակները - մետաղական, հակավանդալ, լույսով, սահմանափակ տեսողությամբ անձանց համար (**Բրայլի շրիֆտ**)

հարկային ցուցիչ - ծայնային ազդանշանով

հատակը - վինիլային

Պետք է ունենա՝

- հայելի, խցիկի հետնապատի ամբողջ բարձրությամբ

- բռնակ՝ չժանգոտվող մետաղից

-Ֆոտովարագույր, դռների ամբողջ բարձրությամբ,

- խցիկի դռների VVVF համակարգ,

- լեդ լուսավորություն

- օդափոխության համակարգ

-ուղևորների տարհանման համակարգ՝ ներառյալ վերելակի հոսանքի մատակարարման սնման աղբյուրից անջատման դեպքում վերելակի սահուն կանգառի և ուղևորների տարհանման ապահովման (վերև կամ ներքև) նպատակով լրացուցիչ հոսանքի սնման սարքի տեղադրում

-խցիկի ծանրաբեռնվածության խոսակցական հաղորդիչ հայերեն լեզվով

-վերելակից օգտվելու կանոնները հայերեն լեզվով

Խցիկում պարտադիր պետք է առկա լինի հետևյալ տեղեկատվությունը՝

-Վերելակի բեռնատարողությունը (կգ)

-Ուղևորների առավելագույն քանակը

-Արտադրողի անվանումը

-Արտադրման տարեթիվը

-Գործարանային համարը

Թույլատրվում է նշել արտադրության տարեթիվը և գործարանային համարը խցիկի ցանկացած մակերեսի վրա՝ անձնակազմի համար հասանելի ցանկացած վայրում:

Բեռնատարողության և առավելագույն անձանց քանակի վերաբերյալ տեղեկատվությունը կարող է իրականացվել «...կգ ...մարդ» մակագրությամբ կամ պատկերագրերի տեսքով:

Հին վերելակի փոխարինում

- հին վերելակի ապամոնտաժում, ապամոնտաժված թափոնների և վերելակի բաղկացուցիչների բեռնում և հանձնում (տեղափոխում Երևանի վարչական տարածքում պատվիրատուի կողմից նշված հասցե): Հին վերելակի ապամոնտաժման և նոր վերելակի տեղադրման արդյունքում առաջացած շինարարական աղբի տեղափոխում Նուբարաշենի խճուղուն հարող աղբավայր:

-վերելակի հակակշռի ամբողջական փոխարինում նորով և ամրացում առավելագույնը 1.5 մետր հեռավորությամբ

- վերելակի խցիկի ուղղորդիչների ամբողջական փոխարինում նորով և ամրացում առավելագույնը 1.5 մետր հեռավորությամբ

-դռների բացվածքի մեծացում՝ հին վերելակի ապամոնտաժման ընթացքում դռների բացվածքի չափսերի ապահովումը պետք է իրականացվի սղոցի հատումով և առաջացած անհարթությունների և խոռոչների հարթեցում սվաղի միջոցով

- յուրաքանչյուր հարկի վերելակի դռների հին շրջանակների ապամոնտաժում և նորի տեղադրում: Նոր շրջանակները պետք է պատրաստված լինեն լամինացված ՄԴՖ-ից, առկա շրջանակներից ոչ պակաս լայնությամբ, բոլոր կողմերից պահպանելով համաչափությունը: Շրջանակի գույնը տեղադրման աշխատանքների իրականացումից առաջ նախապես պետք է համաձայնեցվի պատվիրատուի հետ

-վերելակի շեմի նորոգում (ըստ տեղային անհրաժեշտության՝ շաղախ կամ մետաղյա թիթեղ-5մմ ոչ պակաս): Շեմի վերանորոգումը մետաղյա թիթեղի տեղադրման միջոցով իրականացնելու դեպքում՝ ներկում վերելակի դռների շրջանակին համապատասխան

- վերելակի խցիկի արտաքին առաստաղի վրա և հորանի յուրաքանչյուր հարկում լուսավորության մոնտաժում

- նոր տեղադրված վերելակի էլեկտրաէներգիայի սնման կետից մինչև վերելակի մեքենայական սրահի հոսանքի նոր մալուխի անցկացում, նաև երկու վերելակի առկայության պարագայում հոսանքի մեկ աղբյուրից մեկ մալուխով սնման դեպքում առանձնացնել սնող մալուխները՝ յուրաքանչյուր վերելակին հատկացնելով առանձին սնող նոր մալուխ, մատակարարի (օպերատորի) հետ համաձայնեցված տեխնիկական նորմերին համապատասխան:

Վերելակի տեղադրման աշխատանքներ

Մրցույթին մասնակցել ցանկացողը պարտավոր է նախքան մրցույթին հայտ ներկայացնելը ներկայացված հասցեում սեփական ուժերով կատարել ըստ տեխնիկական բնութագրի իրեն անհրաժեշտ բոլոր ուսումնասիրությունները: Թերություններ և/կամ անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

Մրցույթի արդյունքում ընտրված մասնակիցը իր միջոցներով պարտադիր պետք է կատարի վերելակի բոլոր պարամետրերի չափագրում (հորանի չափը, դռների բացվածքը, դռների բարձրությունը, վերին հարկի բարձրությունը, բարձրացման բարձրությունը և ըստ անհրաժեշտության այլ հավելյալ չափագրումները):

Ընտրված մասնակիցը կրում է նշված չափագրումների արդյունքների ճշտության և ըստ դրանց տեղադրվող վերելակի համապատասխանության ողջ պատասխանատվությունը:

- վերելակների տեղադրման աշխատանքներից առաջ կատարել ուսումնասիրություն վերելակի հորանում և ըստ անհրաժեշտության իրականացնել բոլոր անհրաժեշտ աշխատանքներն ու միջոցառումները, այդ թվում նաև շինարարական աշխատանքները, որոնք անհրաժեշտ են վերելակի տեղադրման և հետագա անվտանգ շահագործման համար

- վերելակների տեղադրման աշխատանքների ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ քաղաքացիների կյանքին և առողջությանը սպառնացող հնարավոր վտանգները կանխելու ուղղությամբ

Վերելակների փոխարինման և սպասարկման անհրաժեշտ պայմաններ

-Կազմակերպությունը պետք է առաջնորդվի Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 824 որոշմամբ հաստատված «ՄՄ ՏԿ 011/2011 վերելակների անվտանգություն» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով

- Տեղադրման աշխատանքները պետք է իրականացվեն ԳՕՍՏ 33984.1-2023 «Վերելակներ. Վերելակներ մարդկանց կամ մարդկանց և բեռների փոխադրման. Սարքին և տեղադրման անվտանգությանը ներկայացվող ընդհանուր պահանջներ» ստանդարտին համապատասխան

- Կազմակերպությունը պետք է ունենա համապատասխան (էներգետիկ ոլորտի) լիցենզիա և վերելակների անվտանգ սպասարկումն իրականացնող որակավորված աշխատակիցներ:

- Յուրաքանչյուր վերելակի տեղադրման առավելագույն ժամկետը սահմանվում է 40 օրացուցային օր՝ բացառությամբ պատվիրատուի կողմից հիմնավոր համարված խոչընդոտների առկայության դեպքում:
- Յուրաքանչյուր վերելակի փոխարինման աշխատանքների մեկնարկի վերաբերյալ համատեղ կազմվում է արձանագրություն պայմանագրի կողմի և պատվիրատուի միջև:
- Մրցույթի արդյունքում ընտրված մասնակիցը յուրաքանչյուր վերելակի փոխարինման ավարտից հետո պետք է ներկայացնի նոր տեղադրված վերելակի տեխնիկական անվտանգության փորձաքննության եզրակացություն և վերելակի անձնագիր: Անձնագիրը պետք է ներկայացվի հայերեն կամ ռուսերեն լեզվով

Կատարված աշխատանքը կարող է ընդունվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հավատարմագրված և լիազոր մարմնի կողմից հաշվառված իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ (այսուհետ՝ հավատարմագրված անձ) կողմից տրված դրական եզրակացության առկայության դեպքում: Հավատարմագրված անձի կողմից վերելակի փորձաքննությունը պետք է իրականացվի պատվիրատուի ներկայացուցչի ներկայությամբ՝ նախապես համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

Երաշխիք, ամիս - 24 (տեղադրումից հետո)

Տեխնիկական սպասարկում, ամիս - 12 (տեղադրումից հետո)

Աշխատանքների մեկնարկից հետո ընտրված մասնակիցը պարտավոր է պատվիրատուին գրավոր կերպով ներկայացնել վերելակը արտադրող գործարանի կողմից հաստատված երաշխիքային սպասարկման պայմանները և կանոնները: Մասնավորապես տրվող երաշխիքը պետք է ներառի առնվազն հետևյալ տեղեկատվությունը՝

1. Վերելակի հիմնական հանգույցների (շարժիչ, էլեկտրոնային կառավարման համակարգ, դռներ և դրանց աշխատեցման մեխանիզմներ, հաճախականության կարգավորիչ և այլն) երաշխիքային փոխարինման կամ վերանորոգման պայմանները
2. Երաշխիքի ընթացքում կատարվող աշխատանքների ծավալը, դրանց իրականացման կարգը և ժամկետները
3. Բոլոր այն դեպքերը, որոնց ժամանակ չի գործում երաշխիքային պարտավորությունները

Տեխնիկական սպասարկման աշխատանքներ

-հորանի սարքավորումների վրա առաջացած աղբի հեռացում (ամիսը մեկ անգամ)

-վերելակի աշխատանքի ստուգում հարկային կանչերի և խցիկի ներսի կոճակներով, կարգավորում (ամիսը մեկ անգամ)

-էլեկտրական սարքավորումների դիտարկում, մաքրում փոշուց և աղտոտվածությունից (ամիսը մեկ անգամ)

- էլեկտրական թողարկիչների և ռելեների կոնտակտային համակարգի ստուգում (ամիսը մեկ անգամ)

-հորանային դռների աշխատեցման մեխանիկական համակարգի և նրանց փականների ստուգում, կարգավորում (ամիսը մեկ անգամ)

- հորանային դռների համակարգի մեջ մտնող էլեկտրական վերջնային անջատիչների ստուգում (ամիսը մեկ անգամ)

- խցիկի դռների մեխանիկական և էլեկտրական համակարգի ստուգում, կարգավորում (ամիսը մեկ անգամ)
- խցիկի և հորանի դռների աշխատանքի ստուգում միավորված ռեժիմում, կարգավորում (ամիսը մեկ անգամ)
- տվիչների և դրոշակների ստուգում միավորված ռեժիմում վերելակի ընթացքի ժամանակ (ամիսը մեկ անգամ)
- խցիկի դռների դիտարկում աշխատանքի ընթացքի ժամանակ, կարգավորում (ամիսը մեկ անգամ)
- վերելակի հորանի լուսավորության ստուգում (3 ամիսը մեկ անգամ)
- կարապիկի և էլեկտրական սարքավորումների ստուգում աշխատանքի ընթացքում, անհրաժեշտության դեպքում կարգավորում (3 ամիսը մեկ անգամ)
- արգելակների ստուգում (զսպանակների ամբողջականությունը, հողակապերի միացումը, լծակները, մեջդիրների մաշվածության աստիճանը) անհրաժեշտության դեպքում կարգավորում (3 ամիսը մեկ անգամ)
- հորանի էլեկտրական մալուխների վիճակի ստուգում (3 ամիսը մեկ անգամ)
- պողպատյա ճոպանների ամրացման կետերի համակարգի մեջ մտնող զսպանակների ամբողջականության ստուգում և բալանսի կարգավորում (3 ամիսը մեկ անգամ)
- արագության սահմանափակման ճոպանի ձգման ստորահորանում գտնվող սարքի ստուգում, կարգավորում (3 ամիսը մեկ անգամ)
- խցիկի և հակակշռի ուղղորդիչների յուղման համակարգի, փոխանցման տուփի յուղի մակարդակի ստուգում (3 ամիսը մեկ անգամ)
- խցիկի առաջին և վերջին հարկերում գտնվելու խախտվածության վթարային անջատիչի ստուգում, կարգավորում (3 ամիսը մեկ անգամ)
- մետաղական ճոպանների միացման համակարգի ստուգում (3 ամիսը մեկ անգամ)
- խցիկի աշխատանքի սահունության դիտարկում, կարգավորում (3 ամիսը մեկ անգամ)
- մեքենայական սրահի բոլոր էլ.սարքավորումների ամբողջական դիտարկում , շարժական սարքավորումների լարերի միացման ստուգում (3 ամիսը մեկ անգամ)
- հիմնական ճոպանատար անիվի ակոսների մաշվածության ստուգում (6 ամիսը մեկ անգամ)
- արագության սահմանափակման գլխիկի անիվի ճոպանի ակոսի մաշվածության ստուգում (6 ամիսը մեկ անգամ)
- ճոպանների մաշվածության ստուգում (6 ամիսը մեկ անգամ)
- խցիկի և հակակշռի ուղղորդիչների ամրացվածության ստուգում, ամրացում (6 ամիսը մեկ անգամ)
- հեղյուսային միացումների դիտարկում, կարգավորում (6 ամիսը մեկ անգամ)
- բարձացնող ճոպանների վթարային իրավիճակում գտնվելու ժամանակ անհրաժեշտ անվտանգության սարքավորումների աշխատանքի ստուգում, կարգավորում (6 ամիսը մեկ անգամ)
- խցիկի անկման որսիչների դիտարկում և մասնակի ստուգում, կարգավորում (6 ամիսը մեկ անգամ)
- վերելակի վերամբարձ կարապիկի դիտարկում (6 ամիսը մեկ անգամ)
- ուղևորների տարհանում՝ ըստ անհրաժեշտության և ստեղծված իրավիճակի:
- տեխնիկական սպասարկման պահանջներին և ժամկետներին համապատասխան աշխատանքների ավարտից հետո յուրաքանչյուր վերելակի վերաբերյալ կազմվում է արձանագրություն սպասարկող կազմակերպության ներկայացուցչի և շենքի կառավարման մարմնի կողմից լիազորված ընթացիկ սպասարկում իրականացնող մասնագետի համատեղ ստորագրությամբ:

- մրցույթի արդյունքում ընտրված կազմակերպությունը նոր վերելակի տեղադրումից հետո պարտավոր է վերելակի ընթացիկ սպասարկումն իրականացնող կազմակերպության մասնագետներին ծանոթացնել նոր վերելակին՝ ըստ տեխնիկական անձնագրի ամբողջ կառուցվածքին, շահագործման մեխանիզմին և կազմակերպել մասնագիտական ուսուցում նոր վերելակի ընթացիկ շահագործման և սպասարկման պահանջների պահպանման վերաբերյալ

- Ապրանքը պետք է համապատասխանի որակի նկատմամբ պահանջներին, որոնք սահմանվում են տեխնիկական կանոնակարգով, ստանդարտացման ոլորտում փաստաթղթերին, պետական ստանդարտներին, որոնք կիրառվում են այդպիսի ապրանքների համար:
- Ապրանքը պետք է մինչ այդ շահագործման մեջ եղած չլինի Մատակարարի և (կամ) երրորդ անձանց մոտ, մինչ այդ ենթարկված չլինի վերանորոգման, նորացման կամ վերականգնման, չպետք է գտնվի գրավի, արգելանքի կամ այլ ծանրաբեռնության տակ:
- Ապրանքի վրա չպետք է լինեն մեխանիկական վնասվածքների հետքեր, ինչպես նաև մատակարարվող Ապրանքի պաշտոնական նկարագրությանն այլ անհամապատասխանություններ:
- Գնման ընթացակարգի տեխնիկական բնութագրերին կից՝ ըստ հասցեների տրամադրվում է գնման առարկայի համար սահմանված չափորոշիչները:
- Մրցույթի արդյունքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել վերելակների ծագման համալիր սերտիֆիկատ:

Հ/Հ	Հասցե/մուտք	Բեռնատարողությունը /կգ/	Հարկայնությունը /հարկ	Կանգառների թիվը
1	2	3	4	5
Կենտրոն				
1	Բյուզանդի փողոց հ. 1/3 շենք	400	8	8
2	Բյուզանդի փողոց հ. 1/3 շենք	630	8	8
Ընդամենը՝ 2				

* Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում:

** Եթե ընտրված մասնակցի հայտով ներկայացվել է մեկից ավելի արտադրողների կողմից արտադրված, ինչպես նաև տարբեր ապրանքային նշան, ֆիրմային անվանում և մոդել ունեցող ապրանքներ, ապա դրանցից բավարար գնահատվածները ներառվում են սույն հավելվածում: Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մոդելի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը,ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողի

անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկը սահմանվում է օրացուցային օրերով՝ հաշվարկն իրականացնելով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից :

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

/ստորագրություն/
Կ.Տ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												Ընդամենը
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
	42414700/515	վերելակների (տեղադրումով և սպասարկումով) ձեռքբերում	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

/ստորագրություն/
Կ.Տ

Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ն ժամկետը /ըստ վճարման ժամանա կացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը _____ պայմանագրի համարը _____
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով
Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

Ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

ԾԱՆՈԻՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
գնորդի անվանումը վաճառողի անվանումը

«-----/-----» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____ -ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «-----» ծածկագրով ֆակտորինգի
վաճառողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 8.12 կետով սահմանված պահանջներին:

_____ (ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը))

_____ ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.

NOTICE
Regarding the procedure of Inquiring for Quotations

This text of the notice is approved by decision of the Open Tender Commission
"3" of "26" "11" of 2025 and is published
pursuant to Article 26 of the Law of the Republic of Armenia "On procurement"

Code of the open tender EQ-GHAPDzB-26/2

The contracting authority Yerevan municipality, located at the following address: the 1 Argishti Str, Yerevan, RA, gives notice for an open tender which shall be carried out in one stage, through Armeps (www.armeps.am) system of electronic procurement.

The bidder selected based on the results of the open tender will be proposed, in a prescribed manner, to conclude a contract for Supply of elevators (installation and maintenance) of Yerevan apartment buildings (hereinafter referred to as "the contract").

Pursuant to Article 7 of the Law of the Republic of Armenia "On procurement", any person, irrespective of the fact of being a foreign natural person, an organisation or a stateless person, shall have equal right to participate in this tender.

The qualification criteria for the persons ineligible to participate in the tender, as well as for bidders, and the documents to be submitted for evaluation of those criteria shall be established by the invitation for this procedure.

The selected bidder shall be determined from among the bidders having submitted bids evaluated as satisfying the requirements of the invitation, by the principle of giving preference to the bidder having submitted the lowest price proposal.

The provisions of the Agreement on Government Procurement of the World Trade Organization shall apply to this tender.¹

In case of a request to provide the invitation electronically, the contracting authority shall ensure the free of charge provision of the invitation electronically within the working day following the date of receipt of the application.

Failure to receive the invitation shall not limit the bidder's right to participate in this procedure.

The bids for the tender must be submitted electronically, through Armeps (www.armeps.am) system of electronic procurement, by 11:00 o'clock of the (5 desember) from the date of publication of this notice.

The bids may, in addition to Armenian, also be submitted in English or Russian.

The bid opening will take place electronically, through Armeps system of electronic procurement, at 11:00 o'clock on the on the (5 desember)

For receiving additional information concerning this notice, you may apply to G. Muradyan, Secretary of the Evaluation Commission

Telephone + 374 11 514373
E-mail gor.muradyan@yerevan.am
Contracting authority Yerevan municipality

¹Where the procurement price does not exceed the thresholds specified by the Agreement on Government Procurement of the World Trade Organization, this sentence shall be removed from the notice.

ОБЪЯВЛЕНИЕ О ЗАПРОСЕ КОТИРОВОК

С применением пункта 2 части 6 статьи 15 Закона «О закупках»

Настоящий текст объявления утвержден Решением Оценочной Комиссии от "26"
"11" 2025 года "3"

Код процедуры EQ-GHAPDzB-26/2

Заказчик р.Армения, мерия города Ереван находящийся по адресу Аргишти 1: объявляет запрос котировок, который проводится одним этапом, посредством системы электронных закупок Armpers (www.armpers.am).

Участнику, отобранному по итогам настоящей процедуры, в установленном порядке будет предложено заключить договор на поставку лифтов (с установкой и обслуживанием), (далее — договор).

Согласно статье 7 Закона Республики Армения "О закупках", любое лицо, независимо от того, является ли оно иностранным физическим лицом, организацией или лицом без гражданства, имеет равное право на участие в настоящей процедуре.

Условия предъявляемые к лицам, не имеющим права на участие в данной процедуре, а также участникам, установлены приглашением на настоящую процедуру. Отобранный участник определяется из числа участников, подавших заявки, оцененные удовлетворительно по неценовым условиям, по принципу предпочтения, отдаваемого участнику, представившему минимальное ценовое предложение.

В отношении настоящей процедуры применяются положения Соглашения Всемирной торговой организации по правительственным закупкам.¹

При наличии требования о предоставлении приглашения в электронной форме заказчик обеспечивает бесплатное предоставление приглашения в электронной форме в течение рабочего дня, следующего за днем получения заявления.

Заявки на настоящую процедуру необходимо подать в электронной форме, посредством системы электронных закупок Armpers (www.armpers.am), до 11:00 часов **5-го декабря** 2025г. дня с даты опубликования настоящего объявления.

Кроме армянского языка заявки могут быть поданы также на английском или русском языке.

Вскрытие заявок будет проводиться в электронной форме, посредством системы электронных закупок Armpers, **в 11:00 часов 5-го декабря 2025г.** со дня опубликования настоящего объявления.

Обжалование данной процедуры осуществляется в порядке, установленном законом РА "О закупках" и гражданским процессуальным кодексом РА.

¹ Если цена закупки не превышает пороги, установленные Соглашением Всемирной торговой организации по правительственным закупкам, то настоящее предложение исключается из объявления.

Для получения дополнительной информации, связанной с настоящим объявлением, можно обратиться к секретарю Оценочной комиссии Мурадян Г. Р

Телефон +374 11 514373

Электронная почта gor.muradyan@yerevan.am

Заказчик мэрия г. Еревана

Утверждено
Решением оценочной комиссии запроса котировок
под кодом EQ-GHAPDzB-26/2
№ 2 от 26.11.2025г.

"мэрия города Ереван"

ПРИГЛАШЕНИЕ

НА ЗАПРОС КОТИРОВОК, ОБЪЯВЛЕННЫЙ С ЦЕЛЮ ПРИОБРЕТЕНИЯ ЛИФТОВ
(С УСТАНОВКОЙ И ОБСЛУЖИВАНИЕМ) ДЛЯ НУЖД "МЭРИИ ГОРОДА ЕРЕВАН"

Уважаемый участник, прежде чем составить и подать заявку просим Вас подробно изучить настоящее Приглашение, поскольку не соответствующие Приглашению заявки подлежат отклонению.

Если Вы не зарегистрированы в системе электронных закупок, но желаете принять участие в данной процедуре, то для подачи заявки необходимо саморегистрироваться в системе Armpers (www.armpers.am). Условия регистрации в системе установлены в руководстве пользователя «Экономического оператора» системы электронных закупок Armpers, размещенного в подразделе «Руководящие указания, руководства» раздела «Законодательство» официального бюллетеня о закупках, действующего по адресу www.procurement.am.

Руководство доступно по следующей ссылке:
http://gnumner.am/hy/page/ughecuycner_dzernarkner/:

Одновременно:

- при вводе заявки в систему электронных закупок Armpers (www.armpers.am) (далее - система) необходимо следовать руководству по закупкам, осуществляемым в электронной форме подраздела «Руководящие указания, руководства» раздела «Законодательство» официального бюллетеня о закупках, действующего по адресу www.procurement.am.

Руководство доступно по следующей ссылке:
http://gnumner.am/hy/page/ughecuycner_dzernarkner

- при возникновении вопросов и проблем, связанных с системой, Вы можете обратиться к заказчику, а также в Министерство финансов РА (далее также уполномоченный орган) по адресу: г. Ереван, ул. Мелик-Адамяна 1 (телефон: (+37411) 28-93-20).

Регистрация в системе, а также подача заявки-бесплатно.

СОДЕРЖАНИЕ

ПРИОБРЕТЕНИЕ ЛИФТОВ (С УСТАНОВКОЙ И ОБСЛУЖИВАНИЕМ) ДЛЯ НУЖД МЭРИИ ГОРОДА ЕРЕВАН

ПРИГЛАШЕНИЯ НА ЗАПРОС КОТИРОВОК, ОБЪЯВЛЕННЫЙ С ЦЕЛЬЮ ПРИОБРЕТЕНИЯ

ЧАСТЬ I.

1. Характеристика предмета закупки
2. Требования к праву участника на участие и порядок их оценки, в случае признания отобранным участником-условия представления обеспечения квалификации.
3. Разъяснение приглашения и порядок внесения изменения в приглашение
4. Порядок подачи заявки
5. Ценовое предложение заявки
6. Срок действия заявки, порядок внесения изменений в заявки и их отзыва
7. Обеспечение заявки.²
8. Вскрытие, оценка заявок и подведение итогов
9. Заключение договора
